ՈՐՍ

Նուան զեւան որսք . առ հրաւէրն աղմըկաձայն Թեակոխէ
Երիտասարդ քաջ 'ի լերինըս , զըմբաղիչ զոռ հոծ մայրեաց
Ջառոյգ մարմինն 'ի հողմ ու 'ի ցուրտ զօրացուցեալ իւր անխընայ ։
Բեռըն Նըմին հաճոյական կայծակնացայտըն զաւազան .
Բազուկն որոտընդոստ զէն անվըրէպ . և արկանէ
Ըռ ուսիւքն ընդ օդս յերեր ըզվայրի ջոկս հաղ Թեւազգեաց .
Քաղցր է Նըմին մըրցիլ յընԹացս ընդ այծեմունս և ընդ խարբուզս ,
Ոյց հետահաս՝ հրատարափ վառ արճըճոյն օժանդակաւ
Հարու տապաստ . քաղցըր հընչէ Նըմին զոչիւն եղջեր փողոյ
Եւ կախի 'ի հետոց հաւատարիմ իւր բարակին ,
Թէ կացցէ կամ վաղեսցէ հառաչակօւլ և վարանեալ
Ի հոտոտել կամ 'ի դիտել ։ Եւ այսոքիկ իցեն սըրտիդ
Քո յաղԹանակք , խուժ պատանիդ . համայն և այսպէս ինձ հաճոյ
Ճակատուդ քիրտն , և սիրտդ հաճոյ , սիրտ զոռուԹեամբ զոնեա չըքնաղ ։
Ի հարկէն Նախ ծընաւ որս և արուեստիւ ապա աճեաց
Ի մեծ վայելս , և պատուեցաւ փառօք վաղ իսկ 'ի շուք չըքնաղ ,
Արժանափառ՝ Թէ ոչ այլ , հերակլիսեանըն պարծանաց .
Ջի ըզմիտս հրաբորբոք վարեալ 'ի կիրԹ վայրագօրէն
Ընդ անտառս հետավարել , կամ յորջս 'ի Ներքըս յարձակեալ
Հարկանել վարազ և ցուլըս վայրենիս և արջ և գայլ ,
Դըժընդակն Արիսի լինի կըրկէս օգտամատոյց ,
Եւ Նորընծայ դիւցազանց առհաւատչեայ առ հայրենիս ։
Որ ըզչանց՝ երիվարաց վարէ մըրցող ըզգումարտակս ,
Շամփրօք և Նիզակօք ըզյարձակումն և զապաւէն
Նըկատեալ՝ և դիտէ ըզժամանակ և ըզտեղիս ։
Ահա զաղանն է յանցանել , ահա խուժեն ամենեքին .
Ի ձայն զըւարԹ յաղԹուԹեան 'ի Թաքթաքուր Թաքըստոցաց
Դիմեն հովիւք և զմահացեալ զազանն հային զարհուրանօք .
Եւ մի ոմն ըզճիրանունսն , ըզժանիսն այլ ոք ցուցանէ
Մատնանիշ , և ընդ միմեանս արկանեն ճառ ակընկառոյցք ։
Իսկ խաչինք և արջառք 'ի դիւր ընդ դաշտըս դեգերին
Եւ հըրճուին բերկրանօք 'ի հանգըստեան զոմք և մըսուրք ։
Մեղմազոյն ևըս ճիգն և խաղաղիկ ևըս ձեռնարկս՝
Հաւորսըն խորագէտ՝ որոճելով ընդ անձըն իւր ,
Թողու զմահիճս յառաջ քան զայգն . առնու զիւրև զուապ բաճկոնակ՝
Վանդակօք և ոստովք ու 'ի բազմազգի կահ և կազմած
Բեռնաւոր ընԹանայ երագափոյԹ յիւր ճանապարհ .
Նովաւ մած ցըպօվք վարմիւք զինի 'ի ցանց մէն մի տունկ ծառ ,
Եւ լարեն զոգցես մէն մի զալարիք հաղբ և զարան .
Անդուստ ըզհետ ցանգապատի կամ 'ի Ներքուստ աշտարակին
Ի խարշափ դաշնակաւոր սաղարդախիտ կաղամախեաց

digitised by A.R.A.R.@

Ընդհրաւիրակն հաւ շարժելով առ խայծ կոչէ զայգուն թռչունս .
կասի թռչնիկըն միամիտ ոստ 'ի յոստոյ կայտռեալ 'ի սոխ,
Ի թօթափել զուլն և ընդլանջ սամսարելով թեկն 'ի թեկին ,
Եւ այն ինչ թևածեալ ոլորտապտոյտ առ 'ի կլտցել
Հատապլտուղ կամ ոքող ձըգէ զկլտուցն որկորաժետ՝
Ըմբռնի մած յանկարծ , աւա՜ղ , և կամ 'ի վարմըն թակարդի .
Հէքն 'ի զուր ջանայ ճըգնի և շըշընջէ ահիւ սարսռեալ,
Զի իսկոյն 'ի վանխուլ հաւալոցէն ոստչի 'ի դուրս
Շինականըն վայրագ , և զօգնութիւն հայցողըն հէք
Առնէ կենազըրաւ բըթամատին անողորմուկ .
Եղկելի՜ դուք թռչնիկք զ'ի խիստ բաղդէն փըրկէ ըզձեզ
Ոչ անմեղութիւն և ոչ ինքնին գեղ վայելուչ ։
Ըզքօսանք դըժընդակ և վայրենի գիւտ արուեստից .
Քաղցրացեալ ինձ դայլայլիկքդ և հովանի սըրբանըւէր
Անտառին՝ որ ձեզ լինի ապըրնջական . և սարդենին
Իցլե , որով ըզհետս իմ Երատոս պըճնազարդէր ,
Ի նորին Արամազդայ բարկութենէն թէ զերծուցէ ։
Զըկնորսութիւն քաղցր եւս է ինձ , և անկանի մըտացս 'ի յուշ
Զի ուր ծոցն Ադրիական հարկս հարկանէ բիւրուք կըղզեօք
Գեղանի թագուհւոյն ալեաց , 'ի միտս իմ անկանի
Զի դեգերել նաւուց ըզցայգն ընդ ծովալիճն հողմախաղաղ
Այն ձիգ ուռկանքն առ 'ի քարշ , և կողովոց գործ հնարագէտ ,
Եւ այն համբր ժողովյն գաղտնածածուկ արուեստից գիւտ
Էին սովոր ինձ ազդել զիւր իմն հեշտանըս քաղցրութեան , .
Եւ ախորժ հաճութիւն յիս խըլըրտէր , մինչ լըսէի
Ըզձըկնորսս և ըզկանայսն ողորմ չափով և փոխ 'ի փոխ
Զայնիւ երգել զերմինիա 'ի ծառատունկս հովանաւորս ,
Զոր կըրկնէին 'ի դարձուած չառաչաձայն ողբերգութեամբ
ինքնին իսկ ծովափունք և Ալկիոն ողորմագութ .
Մինչ կայտիռ ըսթափ 'ի խօսս և քըրքըջանօք իմն աղուաքան
Հեշտ ըզճըրգունան առնէին արկեալ 'ի խաբս ըզխոնջութիւն ։
Սիրային յիշատակք . մերթ լուսնակին ինձ ընդ ճակատս
Հարկանէր վառ ճառագայթ , և մերթ հարեալ ամպքարար
Սըղոխ զովաշունչ ածէր հրապոյրս իմն ըզգայնոցս .
Եւ ես էր զի երեսօք ըզմայլական խորհըրդասոյզ
Հայէի յերկին ու'ի ծով , և սիրտ անդորր հըրճուէր 'ի լանջս ,
Եւ արբուն տխուր հասակ յիւր 'ի ծաղկունան երփնազարդէր ։
Այո՛ , քաղցր էք յիշատակք նախկին ամաց երջանկաւէտ ։

ՊԱՐԳԻԷՐԻ.

digitised by A.R.A.R.@